Է. ՏԱՐԻ 2019 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 30 ՀՈՌԻ 4383–Հ. Տ. 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890–Ն Տ. 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890–ՀԻՃՐ. 6 ՐԷՊԻԼ ԷՎՎԷԼ 1308 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ԱՐԻ ՕՐ ԻՄԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-Խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌ولك

غزتەسى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դրամագլուխ տրուած	160
» » Վեցամսեայ » »	80
» » Եռամսեայ » »	40
Գաւառաց » Տարեկան » »	200
» » Վեցամսեայ » »	100
Օտար երկիրներէ տարեկան ֆրանկ	56
» » վեցամսեայ »	28

Դուռը զրկուած լրագրաց համար նոր ծախքը Տնօրէնութիւնն վրայ է
Խմբագրութիւնս զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Է. ՊՈԼԻՍ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԷՊԵՐԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

Վիլհելմ Կայսր հրամայեց որ Մարեշալ Մոլթքէի ծննդեան 90րդ տարեդարձին օր ամեն դպրոցներու մէջ սովորական դասախօսութիւնք դադրին, եւ ինչպէս ուրիշ հանրային հաստատութեանց մէջ, նաեւ վարժարանաց մէջ նոյն օր նուիրուի Մարեշալին փառաւորման և անոր առ հայրենիս մատուցած ծառայութեանց յիշատակման։ Իրենց սովորական դասերուն տեղ, դաստուբ Մոլթքէի վրայ պիտի խօսին աշակերտներուն։

Պերլինի քաղաքային խորհրդոյ գահերեց Պ. ֆոն Ֆորքէնպէք յիսուն հազարէ աւելի բնակիչ ունեցող դերմանական ամեն քաղաքաց քաղաքապետներն ի Պերլին հրաւիրեց, որոշելու համար թէ քաղաքներն ի՞նչ եղանակաւ պիտի մասնակցին Մարեշալ Մոլթքէի փառաւորման հանդիսին։

* * *

Պերլինէ հեռագրագրաշարժ լուր մը կուգայ։ Հազիւ թէ հնարեցաւ անծուխ վառօդն, և ահա կը հնարուի յատուկ մեքենայ մը՝ պատերազմի դաշտերուն վրայ մուխ և ծուխ յառաջ բերելու համար։ Հանրածանօթ քիմիագէտ Փրոֆ. Նայպլէր մեքենայ մը շինեց, որով արուեստական կերպիւ մուխ յառաջ կը բերուի պատերազմի դաշտին վրայ։ Այս մեքենայ պիտի գործածուի երբ բանակի մը շարժումներն հակառակորդ բանակէն ծածկել ուզուի։ Որովհետեւ անծուխ վառօդը, զանազան առաւելութեանց հետ մէկ տեղ, սա անպատեհութիւնն ունի որ բանակի մը դիրքն ու շարժումներն ամեն վայրկեան բացորոշ կը ցուցնէ թշնամի բանակին։

* * *

Ի Պերլին երեւելի դերման բանաստեղծ Լէսինկի արձանին բացումը կատարեցաւ հոկտ. 14ին, ի ներկայութեան Ֆրետերիկ Լէոբոլտ իշխանին, որ Կայսրը կը ներկայացնէր, և նախարարաց և երեւելեաց ոմանց։ Լէսինկի արձանին պատուանդանն ալ զարդարուած է այն երեք օգնականաց պատկերներով, որք Լէսինկի հետ գործակցութեամբ արդի Գերմանիոյ լեզուն և գրականութիւնն հիմնեցին, —Քլայսթ, զինուորական բանաստեղծը, Նիքոլայ, գրավաճառն, և Մովսէս Մէնտէլսոն, քննադատն և իմաստասէրը։

* * *

Գերմանական Կայսրութեան ոստանն ունի այժմ յիսուն չորս հանրային յիշատակարաններ՝ մեծ մարդերու կամ պատմական ծանրակշիռ դէպքերու յիշատակն անմահացնելու սահմանուած։ Այս վերջին կարգի պատկանեալ յիշատակարանք ութ հատ են։ Պատմական անձնաւորութեանց փառաւորման համար կառուցեալ յիշատակարաններէն եօթն կը ներկայացնեն Բրուսիոյ վեհապետներ, մին Բրուսիոյ թագուհի մը, տասներկուքը գերման զօրապետներ, երկուքը՝ պետական մարդիկ, չորսը՝ բանաստեղծներ, եօթն՝ արուեստագէտներ, ութը՝ գիտուններ, և երկուքը՝ ժողովրդեան ներկայացուցիչներ։

* * *

Պերլինի լրագիրք կը ծանուցանեն թէ Պիզմարք իշխան, որ քաջառողջ է, բազմաթիւ այցելութիւններ կ'ընդունի Վարձինի մէջ։ Իւր նախկին խորհրդական Պ. Լոթէր Պիւխեր միշտ իւր քով է։ Իշխանին հետ մէկ տեղ կը բնակի, օգնելով նախկին երկաթեայ նախարարապետին ցուշագրութեանց պատրաստութեան։ Իշխանին երեց որդին կոմս Հէրպէրթ Պիսմարք, որ իւր հօր հետ մէկ տեղ չնորհաղուրկ եղած է, ի Բուրլանտ, (պալթիկեան դաւառք Ռուսիոյ) Պառոն Մանթէօյֆէլի ադարակին մէջ կը գտնուի այժմ, ուստից Փեթերսպուրգ պիտի երթայ։

* * *

Պերլինի Հին-կաթոլիկ հասարակութիւնն (Հանգուցեալ Տքթ. Տէօլլինկէրի հետ մէկտեղ պապական Անսխալութեան վարդապետութեան դէմ բողոք բարձողներն) անցեալ կիրակի մեծ ցնծութեան մէջ էին. որովհետեւ Պերլինի մէջ իրենց տրամադրութեան ներքեւ դրուած առաջին կաթոլիկ եկեղեցւոյն կը տիրէին և առաջին անգամ պաշտօն կը մատուցանէին, առաջնորդութեամբ հին-կաթոլիկ դաւանութեան յարած կաթոլիկ եկեղեցականի մը, որ այս առթիւ իւր պաշտօնի սկզբնաւորութեան քարոզը խօսեցաւ, յոյսյայտնելով հին-կաթոլիկաց ծաւալման և զօրացման Գերմանիոյ մէջ և ամեն կաթոլիկ երկրաց մէջ։

* * *

Վիլհէլմ Կայսր անձամբ պիտի բանայ Բրուսիոյ Խորհրդարանին առաջիկայ նստաշրջանն, և իւր դահճառով պիտի յայտնէ իւր անձնական կարծիքն ու զգացումներն ելմտական, տնտեսական և ընկերային խնդրոց վրայ, որք օրակարգին վրայ են այժմ։

* * *

Փրոֆ. Քոխ, որ հնտախտի միկրոբը գտած է, առ այժմ ետ կեցաւ Պերլինի բարեգործական հիւանդանոցին մէջ հիւանդաց վրայ ձեռնարկած փորձերէն, որով կը յուսայ թոքախտը բուժել։ Իւր փորձին արդեանց վրայ բան չի զրուցեր ո՛չ մէկու, յոյսմէ կը մակաբերուի թէ տակաւին դրական արդիւնք մը ձեռք չէ բերած։

* * *

Գերմանիոյ արդի երիտասարդ Կայսրն երկու եղբայրներ ունի մեռած, Վալտեմար և Եոաքիմ։ Այս օրերս Ֆրետերիկ Կայսեր և իւր այս երկու վաղամեռիկ որդւոց ոսկերք Փոցտամի Խաղաղութեան եկեղեցիէն պիտի փոխադրին յատկապէս իրենց համար կառուցեալ դամբարանն։ Այս արարողութեան մէջ Ֆրետերիկ Կայսրուհւոյն ներկայացուցիչ պիտի լինի արքունեաց նախարար Պ. ֆոն Վէտելֆիբրստորֆ, ուրիշ բարձրաստիճան պալատականներու հետ։ Ֆրետերիկ Կայսեր ծննդեան տարեդարձին առթիւ, նոյն դամբարանին մէջ, (որ գեղեցիկ եկեղեցւոյ մը ձեւն ունի,) երկնային պաշտօն պիտի մատուցուի, որուն ներկայ պիտի լինին Ֆրետերիկ Կայսրուհին, Վիլհելմ Բ. Կայսր, Աւգուստա-Վիքթորիա Կայսրուհին, և կայսերական դերդաստանին ամեն մօտաւոր ազգականք։

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԷՊԵՐԵՐ ԵՒ ԶՐՈՑՑՆԵՐ

Երկու հարիւրէ աւելի Հրեայք, որք հանրային վարժարաններու ընթացքն աւարտած են, բայց Համալսարան չեն ընդունուած այն առարկութեամբ թէ Համալսարաններու ուսանողաց մէջ Հրեայք 100ին 5 են արդէն և հետեւապէս տեղ չկայ նոր ուսանողներու, հանրագիր մը ստորագրեցին, և կրթական նախարարին մատուցին, բողոքելով այս արգելիչ հրամանին դէմ։

—Մի քանի օրեր յառաջ Նէվչէ Վէրէֆ Զինուստանի դէմ յօդուածներ հրատարակեց, չինական դեսպանին փեթերսպուրգի գալուն առթիւ, որ ամեն տարի աշնան եղանակին մէջ կուգայ Ռուսիոյ մայրաքաղաքն։ Աբբունեաց մէջ ազդեցութիւն ունեցող Կրէֆոնէն լրագրին խմբագրապետը՝ Մէսչերսքի իշխան՝ պատասխանելով առ Նէվչէ Վէրէֆ՝ կ'ամբաստանէ զնա ռուս ժողովուրդը Զինացւոց դէմ դրգռելուն համար, և կը բացատրէ այս առթիւ որ եթէ Զինացիք Ռուսիոյ դէմ ոխ պահեն, մեծ վտանգ կարող են սպառնալ։ Ռուսք կ'երեւի թէ իրաւք կը վախնան Զինացիներէն, որք Ասիոյ կողմէ ընդարձակապէս սահմանակից են ռուս Տէրութեան։ Ռուսք այս պատճառաւ իսկ կը պահանջեն Սիպերիոյ մէկ ծայրէն միւսը, մինչեւ չինական սահմանագլուխն, երկաթուղւոյ մը շինութիւնը։ Կրէֆոնէի իշխանաձն խմբագրապետն իւր հայրենակցաց խորհուրդ կուտայ իրենց գործողութեան հիմ բռնել երկու կարեւոր սկզբունքներ, այն է՝ ամենամեծ խաղաղարարութեամբ և բարեկամութեամբ վարուիլ Զինացւոց հետ, որպէս զի Ռուսիոյ դէմ ազգային վրէժ չպահեն, և ընդհակառակն յետին խստութեամբ շարժիլ Հրէից դէմ, որպէս զի Հրեայք ռուսական կենաց մէջ չթափանցեն և իրենց առաջադրեալ նպատակին չհասնին, «որ է Ռուսիոյ մէջ Օրթոտոքսութիւնն և պետական միահեծան դրութիւնը (միապետութիւնը)» խափանել։

ՊԱԼԿԱՆԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ԶՐՈՑՑՆԵՐ

Սերպ կառավարութիւնն Սքուփչինային պիտի առաջարկէ տարեկան 360,000 ֆր.ի թոշակ մը յատկացնել Միլան արքայահօր, որ իւր հրաժարումէն ի վեր կ'ընդունի վերհպատական դերդաստանին համար ամեն տարի Ազգ. ժողովոյն քուէարկած 600 հազար ֆրանքին կէսը, միւս կէսն իւր որդւոյն թողլով։ Կառավարական պալատականներու հետ։ Ֆրետերիկ Կայսրն Ս. Պետերբուրգ, երբ իւր դրամական գործերը կարգի մտնեն, ի Փարիզ բնակութիւնը նախամեծար պիտի համարի Պելկրատի մէջ կենալէն։

—Ադաշիկայ դեկտ. 31ին Սերպիոյ մարդահամարը պիտի կատարի։ Վերջին մարդահամարն 1884ին կատարուած էր, և ցոյց տուած էր Սերպիոյ բնակիչ 1,901,336 հոգի, որ ըսել է 39 բնակիչ առ մէն մի քառ. քիլոմէթր։ Անկէ յառաջ մէկ անգամ միայն, 1834ին, մարդահամար կատարուած էր ի Սերպիա, որ կը ցուցնէր 673 հազար 192 հոգի, կամ 18 բնակիչ առ մէն մի քառ. քիլոմէթր։

* * *

1886 և 1889 տարւոց Պուլկարիոյ վաճառականութեան վիճակագիրք հրատարակեցան, յորմէ կ'երևի թէ ներածութիւնք որք 1886ին 64,285,309 ֆրանք էին, 1889ին բարձրացած են 72,869,245 ֆրանքի, արտածութիւնք որք 1886ին 50,404,314 ֆրանք էին, 1889ին բարձրացած են 80,581,076 ֆրանքի։ Աւստրիա-Հունգարիայէն 1889ին ներածեալ ապրանք 22,492,177 ֆրանք կ'արժէին, և Անգլիայէն ներածեալ ապրանք՝ 21,193,374 ֆրանք։ 1889ին Պուլկարիա ամենէն աւելի ապրանք ղրկած է ի Թուրքիա, 30,555,910 ֆրանքի արժողութեամբ։

—Պ. Սթամպուլով դեռ բոլորովին չաղեկցաւ։ Ժամանակէ մ'ի վեր սաստիկ գլխու ցաւէ կը նեղուէր, որով կը հարկադրուէր ժամերով գլուխը կապել թաց լաթերով, և այս գլխու ցաւեր թեթեւ տեսակէ ուղեղային համախնդութիւն (congestion) յառաջ բերին։ Թէեւ զառանցանք չունեցաւ, բայց նաեւ չէր կրնար գործի պարապիլ։ Որովհետեւ Սոպրանյէի նստաշրջանը կը բացուի հոկտ. 15/27ին, իշխանը կը մտածէ թէ ինչ պիտի ընէ եթէ նոյն օրը Պ. Սթամպուլով պատրաստ չլինի Ազգ. ժողովոյն ներկայանալու։ Գարուէնէն ի վեր նախարարութենէն երկու անդամք պակսած են, և եթէ Պ. Սթամպուլով ալ ներկայ չգտնուի, պուլկար նախարարութիւնն երեք անդամէ բաղկացեալ կը մնայ։ Առաջին պիտանի բանն է պակսած նախարարներուն տեղ նորեր անուանել, և այս ալ կարելի չէ մինչեւ որ Պ. Սթամպուլով չապաքինի։

* * *

Զեռնակորայի իշխանին մտադրած այցելութիւնն առ Ալէքսանդր թագաւոր Սերպիոյ՝ յետաձգեցաւ մինչեւ առաջիկայ գարուն։ Նիքոլա իշխան ձմեռը Զէթինէի մէջ պիտի անցուէ։ Իւր փեսայ Փիոտր Քարաեորկուիչ իշխան ի մօտոյ Զեռնակորայէն պիտի մեկնի և իւր բնակութիւնը պիտի հաստատէ ռուսական Լեհաստանի մէջ, հաւանօրէն ի Վարշաւա։ Քարաեորկուիչ իշխանին կնոջ՝ Զորքա իշխանուհւոյն մահէն ի վեր, այս իշխանին և իւր անորոջ՝ Նիքոլա իշխանին միջև յարաբերութիւնք ձգտեալ էին աւելի կամ նուազ, և այժմ կ'ըսուի թէ յայտնի խզում կայ։ Իրօք ալ դժուար էր որ երկուքին մէջ սէր և միաբանութիւն երկարատև լինէին, քանի որ երկուքին համար ոյ կ'ըսուի թէ օր մը Սերպիոյ դահուն ընտրելի կրնան լինել։ Ցորչափ ողջ էր Զորքա իշխանուհին և Միլան թագաւոր հաստատապէս կը մնար իւր դահուն վրայ, Զեռնակորայի իշխանն իւր թեկնածութեան յաւակնութիւններէն հրաժարիլ մտադրեցաւ յօգուտ իւր փեսին։ Բայց իւր անդրանիկ աղջկան մահէն և Միլան թագաւորին հրաժարումէն ի վեր, Նիքոլա իշխան տարբեր խորհիլ կը թուի։ Սերպիոյ պատանի թագաւորն ամուսնացեալ չէ, ուղղակի յաջորդ չունի, և եթէ՝ Աստուած մի՛ արասցէ՝ արկածի մը հանդիպի, խնդիր է թէ ո՛վ կրնայ յաջորդել իրեն։ Բնականապէս շատ Սերպեր կան որք Նիքոլա իշխանն յարմարագոյն կը նկատեն, մանաւանդ Զեռնակորացիք եւս ազգաւ և լեզուաւ Սերպ են, ինչպէս կան Սերպեր որք Քարաեորկուիչ իշխանը նախամեծար կը դատեն, իբրեւ շնաւիղ երբեմն Սերպիոյ դահուն վրայ բազմած գերդաստանի մը։

—Ծանուցինք թէ Զարը Եուրուլուէ անուն գեղեցիկ մեծ շոգենաւը նուիրած է իւր «անկեղծագոյն բարեկամին», Զեռնակորայի իշխանին։ Բայց այս շոգենաւին բանձնումը Նիքոլա իշխանին՝ յետաձգուած է առաջիկայ տարուան, շոգենաւն այնպէս կազմակերպելու նպատակաւ որ ի հարկին մարտանաւի պաշտօն ալ կարենայ կատարել։ Բաց ասած, Նիքոլա իշխան, որ բնաւ շոգենաւ ունեցած չէ ցարդ, պէտք կը զգայ նախապէս նաւաստիներ և նաւային սպայեր դտնել այն շոգենաւը վարելու համար։ Զի Աւստրիա չի կրնար թոյլատրել որ ռուս սպայք և նաւազք վարեն Ադրիական մէջ մնալու սահմանուած մեծ շոգենաւ մը։ Վիեննայի լրագիրք այս առթիւ դիտել կուտան թէ Պելգրատի դաշնագրին 29րդ յօդուածը Զեռնակորայի իշխանին կ'արգիլէ ո՛և է մարտանաւ ունենալ։ Զեռնակորա նոյն իսկ նաւային դրօշ մ'ունենալու իրաւունք չունի։ Զեռնակորեան ծովեզերաց ծովու կողմէ պաշտպանութիւնն յանձեալ է Աւստրիոյ, և Զեռնակորեան ու առևտրական նաւեր պարտին գտնուիլ ընդաւստրեան հիւպատոսական պաշտպանութեամբ։ Այս դաշնագրական որոշ տրամադրութիւնք քանի որ կան, Նիքոլա իշխան ի՞նչ պիտի ընէ Եուրուլուէ, կը հարցունեն աւստրեան լրագիրք։

* * *

Բողոքական Պուլկարք յօրթոտոքսութիւն կը վերադառնան։ Ի Սամսոնդ, բոլոր բողոքական Պուլկարք իրենց մայրենի եկեղեցւոյն դիրքը վերադարձան այս օրերս, և այս առթիւ պուլկար լրագիրք կը ծանուցանեն թէ Պուլկարիոյ ուրոյն իշխանապետութեան հաստատումէն ի վեր, շատ մը բողոքական Պուլկարք իրենց նախկին հաւատքին դարձած են։

* * *

Մեծ. Օրէնքով կը հրատարակէ թէ յԱրպանիչօրի Պուլկարք այրեցին Ցունաց վարժարանն, և յոյն վարժապետին հրաման տուին հեռանալ գիւղէն։ Ի Տէրմէնտերէ Պուլկարք գրաւեցին Ցունաց եկեղեցին և տակաւին ետ չդարձուցին իրենց տէրերուն։

ՃԱՓՈՆ

Ճափոնցի պաշտօնեայներ այս օրերս այցելեցին Վիսպատն, ուր երկու ամսոյ չափ պիտի բնակի Միքատոն, Ճափոնի վեհապետն որ Եւրոպա կուգայ ի մօտոյ։

—Ճափոնական լրագիրք կը ծանուցանեն թէ ի Հիսկո հնտախտի երեւուն ի վեր (օգոստ 15) 5,108 անձինք հնտախտէ բռնուած և 2,950 անձինք մեռած են։

ԼԻՆՁԻ ՕՐԷՆՔ

Անցեալ չորթուն Միացեալ Նահանգաց Լուիզիանիա Նահանգին մէջ ժողովուրդն իւր ձեռքը սպանեց սեւամորթ մը որ խոստովանած էր նոյն Նահանգին Աթէնս քաղաքին մէջ մարդու մը տունն արձանակ պարպած լինելը։

Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

Ի Թաշքէնտ ռուսական հովանաւորութեան ներքեւ բացուած անգլիական ցուցահանդէսն յոյժ շահեկան եղաւ, և ոչ նուազ յաջող, քանի որ 34,214 այցելուներ դացին տեսնել դայն, ընդորս բազմաթիւ օտարազգիք, որք Կեդրոնական Ասիոյ մէջ ռուսական քաղաքակրթութեան արդիւնաւորման երեւելի ապացոյց մը նկատելով այս ցուցահանդէսս, մեծապէս զգածուեր են։ Ցուցահանդէսը մէկ ամիս բաց մնաց։

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պոհեմիոյ նահանգային երեսփոխանական ժողովոյն բացման առթիւ ուշագրաւ դէպք մը չպատահեցաւ։ Դիտուեցաւ սակայն թէ Վիեննայի դերմանասէրն իրաւախոհութեան հեղինակներէն մին, Շվարցենպերկի իշխանը, վեց շաբթուան արձակուրդ խնդրած է ժողովէն, չուզելով այս իրաւախոհութեան առթիւ ծագելիք վիճաբանութեանց մասնակցիլ։

Ի Փրակա երկոքին կուսակցութիւնք լռելեայն համաձայնած են իրաւախոհութեան գրգռիչ խնդիրը մի կողմ թողուլ առայժմ, վերջին ողողմանց զոհերուն օգնութիւն հասցնելու խնդրոյն վրայ մտածելու համար ամեն բանէ յառաջ։ Իւր բացման ճառով, նահանգային ժողովոյն նախագահը շնորհակալութիւն յայտնեց Կայսեր և կառավարութեան՝ արկածելոց արդէն նուիրեալ նպաստներուն համար։ Բայց իւր ճառէն կ'երևի թէ մեծագոյն ջանքեր և զոհողութիւններ հարկաւոր են, մասամբ ևեթ դարմանելու համար ժողովրդեան և երկրին կրած ծանրագոյն վնասները։

Ի ԿԱՒԿԱՍԻԱ

Ժէրոմ Նափոլէոն իշխանին կրտսեր որդին Լուի Նափոլէոն իշխան, որ առաջ իտալեան բանակին մէջ կը ծառայէր և Իտալիոյ և Ֆրանսայի միջև չպատերազմելն տիրելէն ի վեր ռուսական բանակին մէջ

ԹԷՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԵԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆԿՈՒՄԸ

—Կամ իբր սիրահար, վրայ բերաւ երիտասարդը։

—Ահ, թշուառակա՛նը, կը խոստովանի, գոչեց Օռօռի հայրը, վերջին կատաղութեան մատնուած։

—Ձեւ կարծեր որ ոճիր մը գործած ըլլամ։

—Գաղտագողի տուն մը մտնել, անմեղ, անպաշտպան աղջկան մը քով, հօրը բացակայութեան ժամանակ, զայն դլխէ հանելու նպատակաւ, վատ գործ մըն է։ Ոճիր մըն է, կը հասկնա՞ք, ոճիր մը։

—Այնպիսի նպատակներ կը վերագրէք ինձ, որք մտքէս անցած չեն, պատասխանեց երիտասարդն աշխուժով։ Ձեր աղջիկը գլխէ հանեմ, ե՞ս։ Կը կարծէ՞ք, պարոն։

—Եթէ այդպիսի վատութիւն մը գործած ըլլայիք, կեանքերնիդ վրայ կուտայիք, ըսաւ ծերունին խռպոտ ձայնով մը։

—Օրիորդ Օռօռի նկատմամբ խորին յարգանք մը կը տածեմ ես։ Իւր հօրը՝ կրնամ ըսել ճշմարտութիւնը. կը սիրեմ զինքը։

—Աղջիկս կը սիրէ՞ք։

—Բոլոր հոգւովս։

—Ես այդ բանը չեմ ուզեր, կ'արգիլեմ ձեզ աղջիկս սիրել։

Երիտասարդը գլուխն օրօրեց։

—Կարելի չէ արգելուլ գետին որ իր ջրերը ծովը չի թափէ, պատասխանեց տրտմութեամբ։

—Բայց ի՞նչ դեւ մղեց ձեզմէ մինչև իմ բնակարանս որ այնքան հանդարտիկ էր ցարդ, յարեց ծերունին դողդողար ձայնով մը։ Ի՞նչեր չունիք այս մենաստանին հանդարտութիւնը խռովելու, և իմ ու զաւկիս երջանկութիւնը խանգարելու։

—Ես ո՛չ ձեր երջանկութեան դպած եմ ո՛չ ալ օրիորդ Օռօռի երջանկութեան։

—Հաւատա՞մ։

—Մնաց որ չեմ կրնար ըմբռնել թէ ի՞նչ կերպով կրնայի խանգարել մանկամարդ աղջկան մը երջանկութիւնը, որուն համար կեանքս տալու պատրաստ եմ։

—Դուք չէք հասկնար, չէք կրնար հասկնալ, ըսաւ ծերունին։

Հակիրճ լռութենէ մը ետքը, յարեց խուլ ձայնով մը։

—Ինծի մտիկ ըրէ՛ք, ձեր ո՛վ ըլլալը չեմ գիտեր։

—Ես անունս չեմ ծածկեր, ընդմիջեց երիտասարդն աշխուժով։

—Անունդիդ չեմ հարցուներ, չեմ ուզեր ճանչնալ զձեզ։ Բայց յիշեցէք իմ խօսքերս. կ'արգիլեմ ձեզ՝ անգամ մըն ալ աղջիկս տեսնել։ Տակաւին չեմ գիտեր թէ ի՞նչ տպաւորութիւն առաջ բերիք անոր մատաղ սրտին վրայ. բայց հարկ է,—կը լսէ՞ք,—հարկ է, կուզեմ որ աղջիկս մոռնայ զձեզ. ա՛յլ եւս ձեր խօսքը լսելու չէ։ Հաւատացէ՛ք ինծի, չո՛ւտ հեռացէք այս երկրէն, վասն զի եթէ երբէք տեսնեմ որ այս պատերուն շուրջը կը թափառիք, կրնայ ըլլալ որ սպաննեմ զձեզ։

Ծերունին բուռն ճիգեր կ'ընէր իր բարկութիւնը զսպելու համար։ Իր ձայնն ու նայուածքը հաւասարապէս սպառնական էին։ Աստղերուն լոյսով, Ատրիէն կը տեսնէր անոր աչքերուն շողալը։ Կարմիր ու դեղին ցոլքեր ունէին անոնք, կատղած վագրի մը աչքերուն նման։

—Այդպիսի բան մը չէք կրնար պահանջել ինձմէ, պատասխանեց մարգիզը։ Օրիորդ Օռօռը մոռնա՞լ, այլ եւս չտեսնե՞լ զինքը, կարելի՞ բան է մթէ։ Մի՛ հաւատաք, պարոն, նոյն իսկ եթէ խոստանամ ձեզ. սիրոս պիտի իջնէ կամաց վրայ ու զիս հոս պիտի առաջնորդէ. կուրծք պիտի տամ այն մահուան որով կ'սպառնաք ինձ, Դուք օրիորդ Օռօռի հայրն էք, սակայն զգուշացէ՛ք ձեր իրաւունքները չափազանցելէ։ Կրնայ ըլլալ որ խաբուիք, պարոն, կարծելով թէ ձեր աղջկան երջանկութիւնն ապահովելու համար այդպէս կը շարժիք. ապահո՞վ էք թէ անհուն վիշտ մը չպիտի պատճառէք նմա։ Զիս չի ճանչնալուդ՝ կրնայ ըլլալ որ վայրկեան մը կասկած ունեցած ըլլաք իմ մտադրութեանցս մասին. սակայն ինձ նը-կատմամբ ունեցած կանխակալ կարծիքիդ պիտի փարատեմ։ Կ'աղաչեմ, պարոն, մի՛ այդպէս դատապարտէք զիս առանց վերքանչնութեան։ Թոյլ տուէք որ վաղը այստեղ դամ ձեր պահանջել հարկ դատած բոլոր բացատրութիւնները տալու համար։

—Է՛հ, ա՛լ համբերութիւնս կը հատցունես, գոչեց Օռօռի հայրը ահեղագոչ ձայնով մը։ Կորի՛ր, կ'ըսեմ, կորի՛ր այս տեղէն։ Ա՛լ աղջկանս երեսը չպիտի տեսնես, երբէ՛ք, երբէ՛ք։

Օռօռ՝ Ֆրանչէսքայի բազկաց սեղմումէն խոյս տուած ըլլալով՝ դէպ ի պարտէզն դուռը վազած էր. յետոյ կանգ առած էր լսելով իւր հօրը բարկացած ձայնը։ Զարհուրած, բոլորովին դողդողար, մտիկ ըրաւ։ Ծերունւոյն արտասանած վերջին խօսքերը մահուան զոչանչի մը պէս հնչեցին իւր ականջին, և այնպէս եկաւ իրեն թէ ուժգին հարուած մը կ'ինչեցուէին կուրծքին։ Սրտին բաբախումը դադրեցաւ, աչքերն աջողուեցան. խեղդուկ ճիչ մը արձակեց, դեղեւեցաւ ու մարմնոյն բոլոր ծանրութեամբ ինկաւ հողին վրայ։

—Աղջի՛կս, աղջի՛կս գոչեց ծերունին, դէպի պարտէզ վազելով։

Ատրիէն անոր հետեւեցաւ։ Ինքն ալ լսած էր Օռօռի ճիչը։

Դուռնէն քանի մը քայլ հեռաւորութեամբ, հայրը աղջկանը հանդիպ գտնուեցաւ, որ անշարժ տարածուած էր ծառուղւոյն մէջ։ Անոր վրայ նետուեցաւ ցաւագին ճիչ մը արձակելով, թեւերուն մտադրութեանցս մասին. սակայն ինձ նը-կատմամբ ունեցած կանխակալ կարծիքիդ պիտի փարատեմ։ Կ'աղաչեմ, պարոն, մի՛ այդպէս դատապարտէք զիս առանց վերքանչնութեան։ Թոյլ տուէք որ վաղը այստեղ դամ ձեր պահանջել հարկ դատած բոլոր բացատրութիւնները տալու համար։

—Է՛հ, ա՛լ համբերութիւնս կը հատցունես, գոչեց Օռօռի հայրը ահեղագոչ ձայնով մը։ Կորի՛ր, կ'ըսեմ, կորի՛ր այս տեղէն։ Ա՛լ աղջկանս երեսը չպիտի տեսնես, երբէ՛ք, երբէ՛ք։

Օռօռ՝ Ֆրանչէսքայի բազկաց սեղմումէն խոյս տուած ըլլալով՝ դէպ ի պարտէզն դուռը վազած էր. յետոյ կանգ առած էր լսելով իւր հօրը բարկացած ձայնը։ Զարհուրած, բոլորովին դողդողար, մտիկ ըրաւ։ Ծերունւոյն արտասանած վերջին խօսքերը մահուան զոչանչի մը պէս հնչեցին իւր ականջին, և այնպէս եկաւ իրեն թէ ուժգին հարուած մը կ'ինչեցուէին կուրծքին։ Սրտին բաբախումը դադրեցաւ, աչքերն աջողուեցան. խեղդուկ ճիչ մը արձակեց, դեղեւեցաւ ու մարմնոյն բոլոր ծանրութեամբ ինկաւ հողին վրայ։

—Աղջի՛կս, աղջի՛կս գոչեց ծերունին, դէպի պարտէզ վազելով։

Ատրիէն անոր հետեւեցաւ։ Ինքն ալ լսած էր Օռօռի ճիչը։

Դուռնէն քանի մը քայլ հեռաւորութեամբ, հայրը աղջկանը հանդիպ գտնուեցաւ, որ անշարժ տարածուած էր ծառուղւոյն մէջ։ Անոր վրայ նետուեցաւ ցաւագին ճիչ մը արձակելով, թեւերուն մէջ առաւ ու տենդագին սեղմեց կուրծքին վրայ։ Ցետոյ, հեծկլտանօք, խորին յուսահատութեան և բուռն կատաղութեան մը արտայայտութեամբ, իւր դողահար շրթունքը դրոշմեց աղջկան այտերուն, ճակտին ու մազերուն վրայ։

Համր կինը՝ ծնրադիր, կ'արտասուէր կաթոգին։ Անկենդան աղջկան երկու ձեռքերէն բռնելով, ինքն ալ համբոյրներով ծածկեց զայն։

Մարգիզը, ծառի մը կրթնած, գլուխը կախ, չէր համարձակեր ո՛չ խօսիլ, ո՛չ յառաջանալ, այլ վշտահար՝ կը դիտէր իր աչաց առջեւ պարզուող սրտաճմլիկ տեսարանը։

—Աղջի՛կս, զաւա՛կս, կ'ըսէր ծերունին խելայեղ, ինքզինքիդ եկո՛ւր։ Ես եմ, քու հայրդ, որ բաղկացը մէջ առած է զքեզ, որ սրտին վրայ կը սեղմէ զքեզ. Ո՛հ, կը պաղատիմ քեզ, սիրեցեալ հրեշտա՛կս, բա՛ց աչքերդ, լսէ՛ իմ ձայնս, պատասխանէ՛ քու հօրդ։ Վախնալու բան մը չունիս, ես քու քովդ եմ հիմա՝ զքեզ պահպանելու, պաշտպանելու համար։ Ա՛հ, աղջիկս ա՛լ չի լսեր իմ ձայնս, աչքերը փակ կը մնան, սիրտը դադրած է բաբախելէ, մարմինը պրկուած է, սառած է։ Տէ՛ր Աստուած, բայց մեռա՞ծ է, մեռա՞ծ։ Ո՛վ դժբաղդութեան։

Ցիմարական նայուածք մը նետեց շուրջը, եւ նայուածքը մարգիզին հանդիպեցաւ։

—Դարձեալ դո՛ւ ես, գոչեց կատղի ձայնով մը, դուրս կորի՛ր, թշուառական։ Մինչ իմ վշտիս վրայ խնդալու համա՞ր է մտնիլ առաւ ու տենդագին սեղմեց կուրծքին վրայ։ Ցետոյ, հեծկլտանօք, խորին յուսահատութեան և բուռն կատաղութեան մը արտայայտութեամբ, իւր դողահար շրթունքը դրոշմեց աղջկան այտերուն, ճակտին ու մազերուն վրայ։

Համր կինը՝ ծնրադիր, կ'արտասուէր կաթոգին։ Անկենդան աղջկան երկու ձեռքերէն բռնելով, ինքն ալ համբոյրներով ծածկեց զայն։

Մարգիզը, ծառի մը կրթնած, գլուխը կախ, չէր համարձակեր ո՛չ խօսիլ, ո՛չ յառաջանալ, այլ վշտահար՝ կը դիտէր իր աչաց առջեւ պարզուող սրտաճմլիկ տեսարանը։

—Աղջի՛կս, զաւա՛կս, կ'ըսէր ծերունին խելայեղ, ինքզինքիդ եկո՛ւր։ Ես եմ, քու հայրդ, որ բաղկացը մէջ առած է զքեզ, որ սրտին վրայ կը սեղմէ զքեզ. Ո՛հ, կը պաղատիմ քեզ, սիրեցեալ հրեշտա՛կս, բա՛ց աչքերդ, լսէ՛ իմ ձայնս, պատասխանէ՛ քու հօրդ։ Վախնալու բան մը չունիս, ես քու քովդ եմ հիմա՝ զքեզ պահպանելու, պաշտպանելու համար։ Ա՛հ, աղջիկս ա՛լ չի լսեր իմ ձայնս, աչքերը փակ կը մնան, սիրտը դադրած է բաբախելէ, մարմինը պրկուած է, սառած է։ Տէ՛ր Աստուած, բայց մեռա՞ծ է, մեռա՞ծ։ Ո՛վ դժբաղդութեան։

Ցիմարական նայուածք մը նետեց շուրջը, եւ նայուածքը մարգիզին հանդիպ

ծառայութիւն ընդունած է, այս օրերս Տփղիս գնաց, ուր կը գտնուի Նիժնի-Նովկորոտի հեծելագունդն, յորում դերդնդապետ է։ Այս Փրանսացի իշխան քաջ որսորդ է, և Կաւկասոյ ազնուականք վայրի գազանաց մեծ որսեր կը կազմակերպեն ի պատիւ իշխանին։

Ի ՍՈՒՏԱՆ

Օսման Տիկմա իւր մարդոցմէ մաս մը ղրկեց դէպ ի Սուաքին, քաղաքէն դուրս եկող ամէն մարդիկը դերի վարելու հրամանաւ, յուսալով այս կերպիւ հարկադրել Սուաքինի կառավարութիւնը՝ բանալ քաղաքին դուռները Սուանցյոց առջեւ։ Օսման Տիկմայի մարդիկը Սուաքինի մօտերէն շատ մը ոչխար դրաւեցին տարին, այնպէս որ մինչ Սուաքինի կառավարութիւնը կը սպառնայ սովամահ ընել Սուանցիներն, ասոնք ալ Սուաքինի կարգ մը պաշարները կորել կը սպառնան։

ՍԵՐՊԻԱ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Փրիշթինայի սերպ դեր-հիւպատոսին սպանման խնդրոյն մէջ, Պելկրատի կառավարութիւնն այժմ կը սպասէ որ օսմ. նախնական դատարանէն արձակաւ վճիռն հաստատուի բարձրագոյն դատարանէն, յետ որոյ վերստին պիտի խնդրէ օսմ. կառավարութենէն որ դրամական հատուցում լինի սպանելոյն ընտանեաց։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսենք թէ, ըստ որոշման Մայր Դիւանի, Ազգային ժողովն ի նիստ պիտի հրաւիրուի հոկտեմբեր 19ի ուրբաթ օրը, խորհրդակցելու համար Պատրիարքարանի գործոց վիճակին վրայ։

Նիկոմիդիոյ ազգ. երկսեռ վարժարանց տեսչութեան պաշտօնն ստանձներ է Երուանդ էֆ. Տէր Անդրէասեան, որ ուսեալ և ժրաջան երիտասարդ մ'է և Պարտիզակի պատուաւոր ընտանեաց որդի։

Նիկոմիդիոյ վարժարանց ուսանողներու թիւն է այժմ աւելի քան 400։

Ազգ.—Երկու դեռահաս մանկանց համար վարժուհի մը կը խնդրուի որ գտնայլաւ հայերէն և ըստ բաւականին Ֆրանսերէն։ Դիմել ի խմբագրատուն Արեւելքի։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

— —

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂԱՏԱՏԼԵԱՆ

Հրատարակեցաւ 44րդ թերթն որ կը հանի մինչեւ Omnipotent բառը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԵՐՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆԱՆՔ

Տրապիզոնի Զարշամպա դաւառակին գայմադամ անուանեցաւ Մէհմէտ Խայրի էֆէնտի։

Գոնեաի Գարաբինար դաւառակին գայմադամ անուանեցաւ Օսման Հիճապլի էֆէնտի, գայմադամ Գարամանի։

Նոյն նահանգին Գարաման դաւառակին գայմադամ անուանեցաւ Մուսթաֆա Շիւքրի էֆէնտի, գայմադամ Ակսէքիի։

Նոյն նահանգին Ակսէքիի դաւառակին գայմադամ անուանուեցաւ Նուրի էֆէնտի, գայմադամ Նէֆթի, եւ իրեն յաջողեալ Ղարաբինարի գայմադամ Ամթա էֆէնտի։

Իւլպի առաջին ատիճան տրուեցաւ Սուրիոյ արքունի կալուածոց յանձնաժողովի դեր-նախագահ ու վարչութեան տնօրէն Արիֆի էֆէնտիի և Սուրիոյ նահանգին Մէքթուպճի Հիւսէյին Հիլմի էֆէնտիի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Պոլսոյ Դատաւորին օգնական Մուսթաֆա Միւնիպ էֆէնտիի և Ադրիանուպոլսոյ Նափպ Մէհմէտ Ֆէվզի էֆէնտիի։

Երրորդ կարգի Օսմանիէ՝ Ավլոնիայի երեւելիներէն Սիրէյա պէյի։

Երրորդ կարգի Մէճիտիէ՝ Նաւային գնդապետ Խալիլ պէյի և սպայակոյտի գնդապետ Իսհաք Ճէվտէդ պէյի։

Երկրորդ կարգի Շէֆգաթի՝ Պէրուլթի աւստրիական հիւպատոս Հանգուցեալ Պ. Վէքիքրի աղկան Տիկին Ֆրէյի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Դատական Նախարար Վսեմ. Բիրպա փաշա և Ոստիկանութեան Նախարար Նազըմ պէյ Երէկ կայս. պալատ երթալով, Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստացան։

Նազըմ պէյ յետոյ Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

— —

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

Ոստիկանութեան Նախարարութեան կողմէ հետեւեալն հրատարակուած է այս աւուր թուրք լրագրաց մէջ։

Ցակոբ Պարդ Պատրիքոֆ անուն խուզարար մը մէկ քանի ամիս առաջ սայրաքաղաքս եկած եւ Իրաւագիտական վարժարանի աշակերտներէն Տիվրիկցի Գրիգոր, Դալաթիոյ Թղթատարատան ցրուիչներէն Արմենակ, քաղաքային բժշկական վարժարանի աշակերտներէն Համբարձում Պոյաճեան և դատարկաշրջիկ Մարգար ու Երեմիա անուն երիտասարդները խաբելով, ասոնցմէ եւ ուրիշ մէկ քանի անձերէ բաղկացեալ ոճրագործական մասնախումբ մը (Բանդա) կազմած էր իւր նախագահութեան ներքեւ։ Այս անձ «Պոլսոյ Եղեռնական Մասնախումբ» անուամբ կնիք մը փորագրել տուած և ադով սկսած էր հարուստներէն ըստակ կորզելու նպատակաւ այլ եւ այլ սպառնալիքներ պարունակող նամակները կնքել, դրամները պահանջել եւ կայս. հաւատարիմ հայ հպատակներն ազատել այլ եւ այլ հրատարակութեամբք։ Նոյնպէս ստակ և տեղ չունեցող դաւառացի հայ տղաքներ խաբելով ոճրագործութեան մղել և այսպէս ժողովրդեան մէջ խիլ մը սուտ զրոյցներու տեղի տալ։

Ոստիկանութիւնը, շնորհիւ Վեհ. Սուլթանին, յետ քննութեան ստուգած է վերոգրեալ պարագայներն, և վերոյիշեալ վնասակար անձերը, բայց Համբարձումէ ու Երեմիայէ, ձերբակալած է, ինչպէս նաև այդ մասնախմբին կողմէ լրբև ոճրագործութեան գործիք գործածուած անձերը։

Ոստիկանութիւնը նոյնպէս երէկ ձերբակալած է քսան-քսան և հինգ օր առաջ Թաքքէճի Թաղին մէջ դաշոյնով մը փասուրան Խաչիկ էֆէնտին սպանողն, որ է Արմենակ անուն 16 տարեկան պատանի մը, որդի ի Պէշիքթաշ Սարգիս պէյի կալուածոց մէջ բնակող հնակարկատ Մկրտչի։ Արմենակ հարցաքննուելով ըսած է թէ վերոյիշեալ անձերէ Համբարձում Գումգաբուի զաւխէրին վրայ իրեն հինգ ոսկի տուած և գրգռած է զինքն ըսպանելու փասուրան Խաչիկ էֆէնտին։ Արմենակ յաքած է նաեւ թէ ինք իւր ամբողջ կենացը մէջ այդչափ դրամ մէկտեղ տեսած չըլլալով, տարուեր է՝ եղած առաջարկութիւնն ընդունիլ և այդ ոճիրը գործեր է։ Այս նախնական քննութեանց արդիւնքը պիտի հաղորդուի Դատական Նախարարութեան։

Մասնախմբին կնքոյն հետ գրաւեալ թուղթերէ ու նամակներէ հաստատուած է թէ այդ եղեռնական մասնախումբ՝ միանալով Հնչակ և այլ այդ կարգի լրագիրներու վարչութեանց հետ, վերոյիշեալ խռովութեանց ու ոճրագործութեանց ձեռնարկած է՝ միայն նպատակ ունենալով կայս. հայ հպատակներէն ստակ կորզել դաղանի սպառնալիքով։

Համբարձում, Մարգար և Երեմիա եւս, շնորհիւ Վեհ. Սուլթանին, ամէն պարագայի մէջ պիտի ձերբակալուին։

ՄԷԼԷԼԷՆՊՈՒՐԿԻ ԴՈՒՔԸՐ

Վեհ. Սուլթանը՝ Մէքլէնպուրկի Դուքսին նուիրած է մէկ քանի լուսանկարներ պարունակող գեղեցիկ Ալպոմ մը։ Այս լուսանկարներ, որք պատրաստուած են Ն. Վեհափառութեան լուսանկարչապետ Ապտուլլահ եղբարց կողմէ, կը ներկայացնեն կայս. Դանձարանը, կայս. պալատներէ մէկ քանին և այլ նշանաւոր հնութիւններ։

Արտաքին գործոց Նախարարութեան արարողապետ Իպրահիմ պէյ այս Ալպոմը յանձնեց Դուքսին, որ իւր ջերմ շնորհակալութիւնները յայտնեց։

ԲԱՐԲԱՐ. ՄԵԾ-ԵՊԱՐՔՈՍԸ

Բարձր. Մեծ-Եպարքոսն երէկ առաւօտ կանուխ կայս. պալատ դնաց և Վեհ. Սուլթանի ինչ ինչ հրամաններն ստանալով, Բ. Դուռը դարձաւ և հոն երկու ժամու չափ տեսակցութիւն մը ունեցաւ ֆրանսական դեսպան Մոնթէպելլո կոմսին հետ։

ՎՍԵՄ. ԾԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ

Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդական Վսեմ. Ցարութիւն փաշա երէկ կայս. պալատն մէջ կարեւոր գործերով զբաղած ըլլալով, չկրցաւ իւր պաշտօնատեղին երթալ։

ՊՐՈՒՍԱՑԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Վերջնական կերպիւ որոշուած է որ Մուտանիա-Պրուսա-Բէօթահիոյ երկաթուղոյ ծրագրին հեղինակ Պ. Նակէլմաքէրս սովորական բացութեամբ պիտի չինէ այդ գիծը։ Եւրոպական Նախարար Վսեմ. Ցակոբ փաշա Նախարարաց խորհրդոյ կիրակի աւուր նրսատին մէջ յայտնեց անուանքն այն տեղերու որոց տասանորդի տրոց հաստիք պիտի յատկացուին մէկ մի քիլոմեդրի համար արտօնատիրոջ տրուելիք 13,000ական ֆրանքի երաշխաւորութեան։

ՑՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ինչպէս որ երէկ համառօտիւ ծանուցինք, Ցունաց Պատրիարքարանի Մեծ-Լոգոթէթ Արիսթարքի պէյ, Սամոսի նախկին իշխան Ֆոթիատի պէյ և Քոնսթանթէն Քարաթէօտորի էֆէնտի շաբաթի օրը եպարքոսական պաշտօնատունը դացին ուր Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ տեսակցութիւն մը ունեցան Պատրիարքարանի գործոց վրայ։ Բ. Դուռնէն ելլելով Ֆէնէրի Պատրիարքարանը դացին։

* * *

Երէյլիի մետրապոլիտ Տ. Կէրմանոս Մեծ. Եպարքոս Քեամիլ փաշայի հրաւիրանօք կիրակի օրը Ն. Բարձրութեան ապարանքը դնաց ի Նիշան Թաշ։ Միւնոյն ժամուն հոն կը գտնուէին նաեւ Քօսթաքի փաշա և Մեծ-Լոգոթէթ Արիսթարքի պէյ, որք ներկայ գտնուեցան բարձրաստիճան յոյն եկեղեցականին Մեծ-Եպարքոսին հետ ունեցած տեսակցութեան։

* * *

Ըստ մասնաւոր տեղեկութեանց Մ. Նդէօ-ի, կայս. կառավարութիւնը այնպիսի լուծումի մը տալու վրայ է Ցունաց եկեղեցական խնդրոյն, որ շահակից կողմերը գոհացնելու բնութիւն ունի։ Այս օրերս հաւանաբար այս օրերս հաղորդուի որոց որ անկ է։

ԵԼՅԻ ԳՈՒԼԷԻ ԿԱԶԱՐԱՆԸ

Եէտի Գուլէի Նորակառոյց Կազարանին բացումը տեղի ունեցաւ երէկ մեծ հանդիսիւ։ Հրաւիրեալք ժամ 5ին Եէտի Գուլէ առաջնորդուեցան յատուկ կառախումբով մը որ Կազարանին առջև կեցաւ։ Կազարանին տնօրէն Պ. Սիմին ընդունեց հրաւիրեալներն, որք Կազարանը մտնելով ամէն կողմ շրջեցան և եկան կեցան շէնքին առջեւի հրապարակն, ուր աղօթքներ եղան վանն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանի և ոչխարներ զոհուեցան։ Վեհ. Սուլթանի լուսանկարչապետ Ապտուլլահ եղբարք նոյն պահուն ամբողջ ներկայից լուսանկարներն հանեցին։ Ներկայ էին Զինուորական Քոնսիլ Ճանձնաժողովոյ անդամ Մահմուտ Համտի փաշա և կայս. առաջին թիկնապահ Մէհմէտ փաշա, որք Վեհ. Սուլթանին կողմէ յատկապէս գրկուած էին, ինչպէս նաեւ Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Նախարար Բաֆի փաշա, Քաղաքապետ Բրուսան պէյ, Ոստիկանութեան Նախարար Նազըմ պէյ և այլ բարձրաստիճան պաշտօնատարք։

Բարեմաղթութեանց աւարտումէն յետոյ Բաֆի փաշա և Մահմուտ Համտի փաշա յաջորդաբար բանախօսութիւններ արտասանեցին, որք ներկայից կողմէ ծափահարուեցան։

Ցետոյ ներկայք առաջնորդուեցան Կազարանին մէկ սրահն, ուր ճոխ շքեղաստեղն մը պատրաստուած էր։ Տնօրէն Պ. Սիմն բանախօսութիւն մը ըրաւ և խօսքն աւարտեց ջերմ բարեմաղթութիւններ ընելով վասն կենաց և բարօրութեան Վեհ. Սուլթանի։ Ներկայք «կեցցէ՛»ներով ու ծափահարութեամբ պատասխանեցին։

Հրաւիրեալք այլ և այլ ըմպելիներով եւ ուտելիքներով պատուասիրուելէ յետոյ մեկնեցան մասնաւոր կառախումբով։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, հոկտեմբեր 7ին Հալէպի մէջ 38 հոգի մեռած են հնտախտէ, Ուրֆայի մէջ՝ 3 և Հարիմ դաւառակին մէջ՝ 1։ Անտիոքի մէջ եւս հնտախտ երեւան եկած ըլլալով, երկու հոգի բռնուեր են։

Սուրիայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ հոկտեմբեր 5ին Համա գիւղաքաղաքին մէջ 8 հոգի հնտախտէ բռնուելով, ասոնցմէ 4 և առաջուան բռնուածներէն 3 հոգի մեռած են։ Հոկտեմբեր 6ին նոյն տեղը 8 հոգի բռնուելով, ասոնցմէ 2 և առաջուան բռնուածներէն 3 հոգի մեռած են։ Նահանգին միւս կողմերն հնտախտի որ և է դէպք չէ պատահած։

— —

Կ. ՊՈԼՍՈՅ ՔԱՐԱՓՈՒՆԵՐ

Կ. Պոլսոյ քարափանց շինութեան մենաշնորհի վերաբերեալ պայմանագիրը քննելով Նախարարաց խորհրդոյ կիրակի աւուր նստին մէջ, տեղեկագիր մը պատրաստուեցաւ և կայս. պալատ մատուցուեցաւ։

Դեղարուեստից վարժարանի քննութեանց թուականը մօտեցած ըլլալով, աշակերտաց կողմէ պատրաստեալ գծագրութիւնք ի տես հասարակութեան պիտի դրուին վաղուընէ սկսեալ մինչեւ ամսոյս 23րդ օրը։ Փափաքողք կրնան դիմել նոյն վարժարանն, որ կը գտնուի Թոփքապուի պալատն մէջ արքունի Փողերանոցին դիմացը։

